

«ՎԵՆՆ Արմենիա» ՓԲԸ-ն, այսուհետ «Օպերատոր», ի դեմս _____ մի կողմից և
_____ այսուհետ՝ «Բաժանորդ» ի դեմս
_____ մյուս կողմից, երկուսը միասին, այսուհետև՝ «Կողմեր», կնքեցին սույն
պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկա

- 1.1 Սույն պայմանագրով Օպերատորը «**Quatro Max**» ծառայությունների սակագնային փաթեթի շրջանակում Բաժանորդին մատուցում է **VDSL** տեխնոլոգիայով հանրային էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված ինտերնետ ծառայություն (այսուհետ՝ «Ֆիքսված Ինտերնետ») Օպերատորի կողմից սահմանված սակագներով, որոնք ներկայացվում են Օպերատորի www.beeline.am ինտերնետային կայքում:
- 1.2 Սույն պայմանագրի կնքման պահին Բաժանորդը օգտագործում է Օպերատորի հանրային էլեկտրոնային հաղորդակցության համակցված ցանցի ----- հեռախոսահամարի տակ գործող բաժանորդային գիծը ինտերնետ ծառայությունը ստանալու համար:
Սույն պայմանագրի կնքման պահին բաժանորդին տրամադրվում և վերջինիս անունով գրանցվում են կանխավճարային համակարգի մինչև 5 (հինգ) լրացուցիչ հեռախոսաքարտեր՝
(_____; _____; _____; _____; _____) ցանցի ներսում ամսական փակ խմբի մեջ անվճար թույլների, մեզաբայթերի և բջջային BeeTV հեռուստաալիքների ներառմամբ: Տրամադրված կանխավճարային համակարգի հեռախոսահամարները կլինեն ակտիվ «**Quatro Max**» ծառայությունների սակագնային փաթեթի հիմնական պայմանագրի ողջ ժամկետում:
- 1.3 «Ֆիքսված Ինտերնետ» ծառայությունից օգտվելու ժամանակահատվածում Բաժանորդին տրամադրվում է իդենտիֆիկացիոն ժամանակավոր ----- համարը:
- 1.4 Սույն պայմանագրի շրջանակում Բաժանորդին տրամադրվում է «**Quatro Max**» ծառայությունների սակագնային փաթեթում ներառված ֆիքսված ինտերնետ ծառայությունը հնարավոր առավելագույն արագությամբ:
- 1.5 Պայմանագրի գործողության ընթացքում անվճար օգտագործման է տրամադրվում WiFi ռոուտերը*:
- 1.6 Ծառայության արագությունները գործում են բաշխման (SHARED) սկզբունքով:
- 1.7 Պայմանագիրը կնքվում է 15 օր տևողության փորձաշրջանի հնարավորությամբ, որի ընթացքում Բաժանորդից որևէ վճար չի գանձվում: 15 օրից հետո Բաժանորդի կողմից Պայմանագիրը խզելու վերաբերյալ նախաձեռնություն չլինելու դեպքում Պայմանագիրը համարվում է երկարաձգված 18 վճարովի ամսով: Պայմանագրի առաջին ամսվա ծառայությունները Օպերատորի կողմից Բաժանորդին տրամադրվում են անվճար:
- 1.8 Սույն պայմանագիրը կնքման ամսաթվից 18 ամիսների ընթացքում Բաժանորդի նախաձեռնությամբ լուծվելու դեպքում բաժանորդը սարքին վիճակում հետ է վերադարձնում օգտագործման տրամադրված մոդեմը (ռոուտերը), ինչպես նաև վճարում անվճար տրամադրված առաջին ամսվա (եթե այդպիսին սահմանված է) ծառայությունների արժեքը: Սույն կետի կանոնը կիրառվում է նաև այն Բաժանորդների հանդեպ, որոնց պայմանագրերը միակողմանի լուծվում են «Օպերատորի» նախաձեռնությամբ՝ Պայմանագրի պայմանները Բաժանորդի կողմից խախտելու դեպքում:
- 1.9 Եթե սույն պայմանագիրը կնքելու հետ մեկտեղ Բաժանորդին տրամադրվում է վերջնական սարքավորում, ապա Բաժանորդի վրա տարածվում են սույն Պայմանագրի 5-րդ բաժնում նախատեսված «Վերջնական սարքավորումն օգտագործման հանձնելու մասին» պայմանները:

2. Օպերատորի իրավունքներն ու պարտավորությունները

- 2.1 Օպերատորը պարտավոր է բաժանորդի հեռախոսահամարին ծառայությունն ակտիվացնել սույն պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվի առնելով առկա տեխնիկական հնարավորությունները:
- 2.2 Օպերատորը պայմանագրի կնքման օրվանից 15 օրվա ընթացքում իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ծառայության մատուցումը ընդհանրապես կամ Բաժանորդի կողմից ընտրված սակագնային տարբերակի պայմաններով տեխնիկապես հնարավոր չէ:
- 2.3 Օպերատորը իրավունք ունի սահմանել պայմանագրի լուծման ժամանակ վերջնահաշվարկի հատուկ կանոններ՝ Բաժանորդի կողմից պայմանագրի լուծման պահին օգտագործվող սակագնային փաթեթի պայմաններին համապատասխան:

3. Բաժանորդի իրավունքներն ու պարտավորությունները

- 3.1. Բաժանորդը պարտավոր է մատուցված «**Quatro Max**» ծառայությունների սակագնային փաթեթի և դրա շրջանակում մատուցված այլ ծառայությունների համար վճարել սույն պայմանագրին կից կնքված Լրացուցիչ համաձայնագրով սահմանված ժամկետում և պայմաններով:
- 3.2. Ծառայությունից օգտվելու համար Բաժանորդը կարող է օգտագործել սեփական սարքավորումները, որոնք պետք է համատեղելի լինեն Օպերատորի ցանցի հետ:

4. Ծառայությունների կասեցում և Պայմանագրի լուծման կարգը

- 4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է այնքան ժամանակ մինչև կողմերից մեկը չնախաձեռնի պայմանագրի լուծումը:
- 4.2. Ծառայության դիմաց Բաժանորդի կողմից վճարում չկատարելու դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդին մատուցվող ծառայությունը ժամանակավորապես կասեցվում է: Կասեցման ժամանակահատվածի համար ծառայության գումարը հաշվարկվում է և ենթակա է վճարման:
- 4.3. Ծառայության կասեցման ամսաթվից սկսած 30-ից մինչև 60 օրերի ընթացքում կանխավճարային համակարգի հիմնական հեռախոսահամարի հաշվեկշռի չհամալրման դեպքում Բաժանորդը գրկվում է լրացուցիչ տրամադրված հեռախոսահամարների անվճար ծառայություններից օգտվելու հնարավորությունից, իսկ 60 օրից հետո (ներառյալ

վերջին օրը) բաժանորդի կողմից միասնական գնի վճարում չկատարելու դեպքում հիմնական հեռախոսահամարով ծառայության մատուցումը դադարեցվում է, իսկ լրացուցիչ հեռախոսաքարտերով ծառայությունները մատուցվում են սակագնային փաթեթին համապատասխան սակագներով:

Հիմնական հեռախոսահամարի տրամադրման պայմանագրի խզումը չի ենթադրում Լրացուցիչ հեռախոսահամարներով ծառայությունների մատուցման դադարեցում: Լրացուցիչ հեռախոսահամարները անվանափոխության ենթակա չեն «Quatro Basic» ծառայությունների փաթեթի գործողության ողջ ընթացքում, բացառությամբ, էթե իրականացվում է ամբողջ փաթեթի անվանափոխություն:

4.4. Հաշվարկային ամսվա ընթացքում սույն պայմանագրի լուծման դեպքում Բաժանորդը պարտավոր է ընթացիկ ամսվա **«Quatro Max»** ծառայությունների սակագնային փաթեթի համար վճարել Օպերատորի կողմից տրամադրված ծառայության օրերին համապատասխան:

4.5. Սույն պայմանագրի գործողությունը դադարեցվում է առանց ծանուցման Ֆիքսված ինտերնետ ծառայության մատուցման համար օգտագործվող ֆիքսված հեռախոսագծի ապամոնտաժման պարագայում՝ ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրի լուծման դեպքում:

4.6. Սույն պայմանագիրը կարող է լուծվել՝

4.6.1. Բաժանորդի նախաձեռնությամբ՝ այդ մասին Օպերատորին նախօրոք 10 աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով:

4.6.2. Օպերատորի նախաձեռնությամբ՝

4.6.2.1. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում,

4.6.2.2. Տեխնիկական պատճառներով ծառայությունը մատուցելու անհնարինության դեպքում՝ նախօրոք գրավոր ծանուցելու պայմանով, բացառությամբ սույն պայմանագրի 2.2 կետով սահմանված դեպքի :

4.6.2.3. Բաժանորդի բնակության/գտնվելու վայրում տեղադրված ֆիքսված հեռախոսագծի բաժանորդի կողմից ծառայությունն իր բաժանորդային գծի միջոցով ստանալու դիմումը բավարարելու դեպքում:

4.6.2.4. Բաժանորդի կողմից **«Quatro Max»** ծառայությունների սակագնային փաթեթում ներառված ցանկացած ծառայությունից հրաժարվելու դեպքում, փաթեթում ներառված մյուս ծառայությունների մատուցումը ևս դադարեցվում է:

4.9. Բաժանորդի կողմից չվճարման պատճառով կասեցված ծառայությունը մինչև Օպերատորի նախաձեռնությամբ սույն պայմանագրի լուծումը Բաժանորդի կողմից վճարումները կատարելուց հետո վերաակտիվացվում է 0 դրամ սակագնով: Պայմանագրի լուծումից հետո Բաժանորդի հեռախոսագծին ծառայությունը ակտիվացվում է ընդհանուր հիմունքներով:

5. Վերջնակետային սարքավորումն օգտագործման հանձնելու մասին պայմաններ¹

5.1. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին ժամանակավոր օգտագործման հանձնել VDSL ZTE H168N մոդելը ----- (գործարանային համարը, սերիան և այլ տեխնիկական պայմաններ), իսկ Բաժանորդը պարտավորվում է օգտագործել մոդելը սույն գլխով սահմանված պայմաններին համապատասխան: Մոդելը տրամադրվում է սույն Պայմանագիրը կնքելու պահին Բաժանորդին ծառայությունից օգտվելու հնարավորությունը ընձեռնելու նպատակով:

5.2. Մոդելը տրամադրվում է սույն Պայմանագրի գործողության ժամկետով:

5.3. Մոդելի նկատմամբ Օպերատորի սեփականության իրավունքը պահպանվում է Պայմանագրի 5.11 կետով սահմանված ամբողջ ընթացքում, բացառությամբ սույն Պայմանագրի 5.9-րդ կետով սահմանված մոդելի ամբողջական գինը Բաժանորդի կողմից վճարելու և մոդելի վաճառքի գործարքի փաստով պայմանավորված մոդելի հանդեպ սեփականության իրավունքը վերջինին փոխանցվելու դեպքից: Բաժանորդին մոդել հանձնելու Օպերատորի պարտավորությունը համարվում է կատարված այն Բաժանորդին հանձնելու պահից: Մոդելը Բաժանորդին հանձնելու պահից դրա պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը կրում է Բաժանորդը: Մոդելը հանձնվում է դրա բոլոր պատկանելիքներով և դրան վերաբերող բոլոր փաստաթղթերով:

5.4. Օպերատորը պարտավոր է հանձնել մոդելը սարքին վիճակում և պիտանի այն նպատակներին, որոնց համար սովորաբար օգտագործվում է:

5.5. Բաժանորդը պարտավոր է պահպանել մոդելը սարքին վիճակում, կատարել մոդելի անվտանգ շահագործման բոլոր հրահանգները և օգտագործել մոդելն իր նշանակությանը համապատասխան:

5.6. Բաժանորդն իրավունք չունի մոդելն օտարել, տրամադրել վարձակալության/ ենթավարձակալության, գրավ դնել կամ հանձնել այն անհատույց օգտագործման համար:

5.7. Բաժանորդը, մոդելի թերությունների և/կամ անսարքությունների հայտնաբերելու դեպքում, պարտավոր է դիմել մատակարարողի սպասարկման կենտրոն և հանձնման-ընդունման ակտով փոխանցել մոդելը՝ զննություն և/կամ փորձաքննություն կատարելու համար: Այն դեպքում, երբ թերությունը առաջացել է ոչ Բաժանորդի մեղքով, Բաժանորդն իրավունք ունի իր հայեցողությամբ Օպերատորից պահանջել ողջամիտ ժամկետներում անհատույց վերացնելու մոդելի թերությունները կամ մոդելը փոխարինել պատշաճ վիճակում գտնվող այլ նմանօրինակ մոդելով:

5.8. Օպերատորն իրավունք ունի հրաժարվել թերի կամ անսարք մոդելը փոխարինելուց կամ թերությունները և/կամ անսարքությունները իր հաշվին վերացնելուց, էթե մոդելի զննության կամ փորձաքննության արդյունքում կպարզվի, որ մոդելի թերությունները և/կամ անսարքությունները առաջացել են Բաժանորդի մեղքով: Այդ դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել հատուցելու մոդելի թերությունները վերացնելու ծախսերը կամ պահանջել վնասների 5.9 կետում նշված արժեքի չափով:

5.9. Սույն պայմանագիրը Բաժանորդի նախաձեռնությամբ ցանկացած պահին լուծելու, ինչպես նաև սույն Պայմանագրի պահանջները խախտելու հետևանքով Օպերատորի կողմից այն լուծելու դեպքերում Բաժանորդը պարտավոր է

¹ Այս բաժնի պայմանները կիրառվում են միայն այն Բաժանորդների նկատմամբ, որոնք սույն Պայմանագիրը կնքելով ձեռք են բերել մոդել:

Օպերատորին վերադարձնել մոդեմը սարքին վիճակում բոլոր պատկանելիքներով: Մոդեմը չվերադարձնելու դեպքում Բաժանորդը պարտավոր է վճարել մոդեմի ամբողջական գինը՝ 28000 (քսանութ հազար) դրամի չափով՝ ներառյալ ԱԱՀ և մոդեմը կհամարվի Օպերատորի կողմից Բաժանորդին վաճառված:

5.10 Սույն Պայմանագրի 5-րդ բաժնում սահմանված ժամկետում և կարգով մոդեմը չվերադարձնելու և/կամ դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ մոդեմը վերադարձնելու և/կամ ընդհանուր պարտքի գումարը բռնագանձելու պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու դեպքում Ընկերություն կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անհատական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը:

6 Այլ պայմաններ

6.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագիրը Օպերատորի կողմից կարող է կնքվել և ստորագրվել կնիքի և ստորագրության ֆաքսիմիլային վերարտադրությամբ:

6.2 Սույն պայմանագրի պայմանները միակողմանիորեն կարող են փոփոխվել Օպերատորի նախաձեռնությամբ՝ մեկ ամիս առաջ Բաժանորդին գրավոր ծանուցելու միջոցով:

6.3 Սույն Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման պայմանները՝ ներառյալ սակագնային տարբերակները (սակագնային փաթեթները), կարող են փոփոխվել Օպերատորի հրապարակային օֆերտան Բաժանորդի կողմից ցանկացած եղանակով ակցեպտավորելու միջոցով:

6.4 Ծառայության մատուցման լրացուցիչ և/կամ հատուկ պայմանները, ներառյալ բայց չսահմանափակված առանձին սակագների, սակագնային փաթեթների և Օպերատորի կողմից առաջարկվող կոմերցիոն այլ առաջարկների պայմաններով, հրապարակվում են Օպերատորի պաշտոնական www.beeline.am կայքում:

6.5 Ֆիքսված ինտերնետ ծառայությունը Բաժանորդին է մատուցվում վերջնական օգտագործման համար և նախատեսված չէ Բաժանորդի կողմից այն երրորդ անձանց առաջարկելու/վերավաճառելու համար:

6.6 Բաժանորդի կողմից սույն պայմանագրից առաջացած դրամային պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ իրավունքի իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում Օպերատորը կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անձնական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը և/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:

7 Բաժանորդի տեղեկությունների գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը

7.1 Օպերատորը պարտավորվում է ձեռնարկել բոլոր միջոցները սույն պայմանագրի շրջանակում Բաժանորդի կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Օպերատորը իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

7.2 Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու նպատակով Օպերատորի կողմից իր անձնական տվյալները մշակելու, օգտագործելու, ինչպես նաև դրանք և սույն պայմանագրի 7.1 կետում նշված տվյալները երրորդ անձանց /ներառյալ՝ այլ երկրներ/ փոխանցելու վերաբերյալ: Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը հավաստում է, որ Օպերատորի կողմից ծանուցված է Բաժանորդի անձնական տվյալները մշակելու Օպերատորի մտադրության, մշակման իրավական հիմքերի, նպատակի ինչպես նաև “Անձնական տվյալների պաշտպանության մասին” ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:

7.3 Սույն Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տեղեկացվում է, որ Օպերատորը կարող է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով վարկային բյուրոներին տրամադրել Բաժանորդի կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկություններ: Օպերատորը պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված տեղեկությունների բացահայտման հետևանքով պատճառված որևէ վնասի իրավական հետևանքի համար:

7.4 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

7.5 Սույն պայմանագիրը կնքված է երկու հավասարազոր օրինակից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

«Օպերատոր»

«Բաժանորդ»

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ

/ստորագրություն/

/բաժանորդի էլեկտրոնային հասցե/

Հաստատում եմ, որ սույն Պայմանագրով ծառայությունից բացի ձեռք եմ բերել նաև Պայմանագրում նշված մոդեմը,

ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

“Մեկ ամիսն անվճար” ակցիայի շրջանակում
«**Quatro Max**» ծառայությունների փաթեթի շրջանակում Ֆիքսված ինտերնետի ծառայության և շարժական կապի
ծառայությունների օգտագործման պայմանների մասին

Ք. Երևան

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն, այսուհետ «Օպերատոր», ի դեմս -----մի կողմից և -----
այսուհետ՝ «Բաժանորդ» ի դեմս -----մյուս
կողմից, երկուսը միասին, այսուհետև՝ «Կողմեր», հաշվի առնելով այն, որ Կողմերի միջև կնքվել է «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ
շարժական կապի կանխավճարային համակարգի ծառայությունների մատուցման թիվ -----
-- պայմանագիրը (այսուհետ՝ “Շարժական կապի ծառայությունների մատուցման պայմանագիր”), ինչպես նաև այն, որ
Կողմերի միջև կնքվել է Ֆիքսված ինտերնետ ծառայության մատուցման թիվ _____ պայմանագիրը (այսուհետ՝ “Ֆիքսված
ինտերնետի մատուցման պայմանագիր”), ղեկավարվելով “Էլեկտրոնային հաղորդակցության մասին” ՀՀ օրենքի 43-րդ
հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել Շարժական կապի ծառայությունները և Ֆիքսված ինտերնետի
ծառայությունը համատեղ՝ «**Quatro Max**» ծառայությունների փաթեթով, որի պայմանները և սակագները ներկայացված
են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող կից հավելվածում:
2. Սույն Համաձայնագրով նախատեսված ծառայությունների փաթեթից ամբողջությամբ և/կամ դրանում ընդգրկված
ծառայություններից որևէ մեկից Բաժանորդի կողմից միակողմանի հրաժարվելու /այսուհետ՝ “հրաժարում”/,
ընդգրկված ծառայությունների պայմանագրերով սահմանված պարտավորությունները Բաժանորդի կողմից
չկատարելու հիմքով Օպերատորի կողմից դրանք միակողմանի դադարեցնելու, ինչպես նաև Համաձայնագիրը կնքելու
պահից սկսած 2-րդ ամսից մինչև 18-րդ ամիսը (ներառյալ) ժամանակահատվածում Հավելվածով սահմանված կարգով
և չափով «**Quatro Max**» ծառայությունների փաթեթի համար վճարում չկատարելու դեպքում Բաժանորդը պարտավոր է
կատարել վճարումներ հետևյալ կարգով և չափով.
 - 2.1 Եթե հրաժարումը նախաձեռնվում է Համաձայնագրի կնքման պահից առաջին 15 օրերի ընթացքում, ապա
Բաժանորդի նկատմամբ որևէ տուգանք չի նախատեսվում:
 - 2.2 Եթե հրաժարումը նախաձեռնվում է Համաձայնագրի կնքման պահից սկսած 16-րդ /տասնվեցերորդ/ օրվանից
մինչև 18-րդ /տասնութերորդ/ ամիսը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի ընթացքում և/կամ նույն
ժամանակահատվածում Հավելվածում նշված հերթական միասնական ամսական վարձը սահմանված ժամկետում
չի վճարվում Բաժանորդի կողմից ընդհուպ մինչև սույն համաձայնագրի 4-րդ կետում նշված կարգով «**Quatro Max**»
ծառայությունների փաթեթի սակագներից օգտվելու հնարավորության դադարեցման պահը՝ ապա Բաժանորդը
պարտավոր է այդպիսի հրաժարման պահին և/կամ, համապատասխանաբար՝ վճարման կետանցման ամսաթվից
սկսած մինչև 2-րդ ամսվա վերջին օրը ներառյալ միանվագ վճարել առաջին անվճար ամսվա՝ եթե այդպիսին
սահմանված է, վարձը, ինչպես նաև տրամադրված սարքավորումների լրիվ արժեքը՝ սարքավորումները
ամբողջությամբ չվերադարձնելու կամ պակաս կումպլեկտայնությամբ (պատկանելիքներ) վերադարձնելու
դեպքում:
3. 2.1 ենթակետի կանոնը տարածվում է նաև «**Quatro Max**» ծառայությունների փաթեթում ընդգրկված ծառայությունների
պայմանագրերով սահմանված պարտավորությունները Բաժանորդի կողմից չկատարելու հիմքով Օպերատորի
նախաձեռնությամբ դրանք միակողմանի դադարեցնելու դեպքերի վրա:
4. Բաժանորդի կողմից «**Quatro Max**» ծառայությունների փաթեթով սահմանված ամսական բաժանորդային վարձը
(այսուհետ՝ “ամսական բաժանորդային վարձ”) սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Օպերատորը իրավունք
ունի ժամանակավորապես կասեցնել /ընդհատել/ Ֆիքսված ինտերնետի ծառայության մատուցման պայմանագրով
մատուցվող ծառայությունը, որից հետո ամսական բաժանորդային վարձը չվճարելու դեպքում Ֆիքսված ինտերնետի
մատուցման պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում դադարեցնել Ֆիքսված ինտերնետի ծառայության
մատուցումը՝ միակողմանի լուծելով Ֆիքսված ինտերնետի ծառայության մատուցման պայմանագիրը, որը հանգեցնում է
«**Quatro Max**» ծառայությունների փաթեթի սակագներից օգտվելու հնարավորության դադարեցմանը: Սույն կետում
նշված ամսական բաժանորդային վարձը չվճարելու դեպքում հաշվեկշռի վրա գումար լինելու դեպքում Շարժական
կապի ծառայությունները մատուցվելու են «**Quatro Max**» ծառայությունների փաթեթի այլ սակագներով*՝ սույն
Համաձայնագրին կից հավելվածում նախատեսված պայմաններին համաձայն, իսկ հաշվեկշռի վրա ընդհանրապես
գումար չլինելու դեպքում շարժական կապի ծառայությունները կասեցվելու են միակողմանի (միայն մուտքային զանգեր
ստանալու հնարավորությամբ), որից հետո Օպերատորը իրավունք ունի միակողմանի դադարեցնել շարժական կապի
ծառայությունների պայմանագիրը:
5. Սույն համաձայնագրի կնքումից սկսած 18 ամսվա ընթացքում «**Quatro Max**» ծառայությունների փաթեթից
ամբողջությամբ կամ դրա մեջ մտնող Ֆիքսված ինտերնետ, շարժական կապի կամ հեռուստատեսությանն
ծառայություններից որևէ մեկից Բաժանորդի կողմից միակողմանի հրաժարվելու և/կամ Բաժանորդի կողմից

սույն համաձայնագրի, ինչպես նաև Ֆիքսված ինտերնետի պայմանագրի և/կամ Շարժական կապի մատուցման պայմանագրերի պայմանների համաձայն Օպերատորի կողմից դրանք դադարեցնելու դեպքում Բաժանորդի վրա տարածվելու է Ֆիքսված ինտերնետի ծառայության մատուցման պայմանագրի 5.9-րդ կետով սահմանված ռաուտերի գինը վճարելու պարտավորությունը:

- 6 Բաժանորդի կողմից սույն համաձայնագրից բխող դրամային պարտավորությունները /ներառյալ 2-րդ կետում նշված պարտավորությունները/ սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ իրավունքի իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում Օպերատորը կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անձնական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը և/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:
- 7 Սույն Համաձայնագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են Շարժական կապի մատուցման և Ֆիքսված ինտերնետի ծառայության մատուցման պայմանագրերով:
- 8 10. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման ամսաթվից և գործում է վերը նշված պայմանագրերի ժամկետներին համապատասխան:

«Օպերատոր» «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ

«Բաժանորդ» _____

ստորագրություն/

_____ /Բաժանորդի էլեկտրոնային հասցե/

ՀԱՎԵԼՎԱԾ 1

“Quatro Max” ծառայությունների փաթեթի շրջանակում Ֆիքսված ինտերնետ , շարժական կապի, շարժական ինտերնետ և հեռուստատեսություն ծառայությունների օգտագործման պայմանների մասին Համաձայնագրին

Ծառայությունների փաթեթ	Quatro Max
Անսական բաժանորդային վարձ (դրամ)	13990
Զանգեր դեպի ՀՀ Beeline բջջային ցանց6 Դեպի ՀՀ և ԼՂՀ այլ բջջային ցանցեր	Անսահմանափակ 200 րոպե
Ինտերնետ (ԳԲ)	5
SMS դեպի ՀՀ և ԼՂՀ բոլոր բջջային ցանցեր	300
Ֆիքսված ինտերնետ	Հասցեում հնարավոր առավելագույն արագություն
Հեռուստատեսություն	<ul style="list-style-type: none"> • 133 հեռուստաալիք • 3 սարքով դիտելու հնարավորություն • BeeTV հավելվածի միջոցով ՀՀ Beeline բջջային ցանցում բջջային ինտերնետ տրաֆիկի գրոյակամ տարիֆիկացում

Սակագներ՝ SMS-ները, շարժական ինտերնետի ՄԲ-ները, դեպի ՀՀ և ԼՂՀ այլ բջջային ցանցեր րոպեները սպառելուց հետո	
Շարժական ինտերնետ (ՄԲ)	5 դրամ
SMS դեպի ՀՀ և ԼՂՀ բոլոր բջջային ցանցեր	15.99 դրամ
Զանգեր դեպի ՀՀ և ԼՂՀ այլ բջջային ցանցեր	15.99 դրամ/րոպե
Զանգեր՝ դեպի ՀՀ և ԼՂՀ ֆիքսված ցանցեր	15,9 դրամ/րոպե
Հաղորդագրություններ՝	
SMS Beeline բջջային ցանցում	15,9 դրամ
SMS դեպի միջազգային ցանցեր	20 դրամ
MMS Beeline բջջային ցանցում	15,9 դրամ
MMS դեպի տեղական այլ ցանցեր	15,9 դրամ
MMS դեպի միջազգային ցանցեր	299 դրամ
MMS դեպի Beeline բջջային ցանց ԱՊՀ երկրներում	50 դրամ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

“Quatro Max” ծառայությունների փաթեթի շրջանակում տրամադրվող լրացուցիչ կանխավճարային հեռախոսաքարտերի օգտագործման պայմանների մասին Համաձայնագրին

Սակագնային փաթեթ	“Quatro ՄԻՄ”
Զանգեր դեպի փակ խումբ*	Անսահմանափակ
Բնտերնետ (ՄԲ)	200
Հեռուստաալիքներ BeeTV հավելվածով	20
Սակագներ հիմնական ուղղություններով և շարժական ինտերնետի ՄԲ-ները սպառելուց հետո	
Զանգեր դեպի Beeline բջջային ցանց	5 դրամ
Զանգեր դեպի այլ բջջային ցանցեր	15.9 դրամ
SMS դեպի բոլոր տեղական բջջային ցանցեր	5 դրամ
Շարժական ինտերնետ (ՄԲ)	5 դրամ

* փակ խմբի անդամներ են հանդիսանում “Quatro Max” փաթեթի շրջանակներում տրամադրվող հեռախոսահամարները

- Հեռախոսահամարները ակտիվ են “Quatro Max” ծառայությունների սակագնային փաթեթի հիմնական պայմանագրի ողջ ժամկետում:
- Անվճար ներառումները ակտիվ են այնքան ժամանակ, որքան ակտիվ է հիմնական հեռախոսահամարի փաթեթը:
- Հիմնական հեռախոսահամարի ծառայության կասեցման ամսաթվից սկսած 30-ից մինչև 60 օրերի ընթացքում կանխավճարային համակարգի հիմնական հեռախոսահամարի հաշվեկշռի չհամալրման դեպքում լրացուցիչ հեռախոսաքարտի բաժանորդը գրկվում է անվճար ծառայություններից օգտվելու հնարավորությունից, իսկ 60 օրից հետո (ներառյալ վերջին օրը) բաժանորդի կողմից միասնական գնի վճարում չկատարելու դեպքում պայմանագիրը լուծվում է առանց ծանուցման, և լրացուցիչ հեռախոսահամարին տրամադրված անվճար ծառայությունները վերջնականապես դադարեցվում են:
- Լրացուցիչ հեռախոսահամարի բաժանորդը կարող է շարունակել օգտվել բջջային ծառայություններից՝ սակագնային փաթեթի սակագներից համապատասխան: